Ալեքսանդր Ծատուրյան

Աղջիկ և թիթեռ

Լացի՛ր ինձ հետ, խղճո՛ւկ թիթեռ,
Լացող ընկեր քեզ գըտար.
Թո՛ղ երկուսիս տանջված սրտեր
Միմյանց լինեն մխիթար:

Մանուկն անհոգ, զվարճասեր
Բռնեց քեզ մեր պարտիզում,
Փշրեց քնքուշ քո թևիկներ
Ու բաց թողեց քեզ օդում.
«Գընա՛, թռի՛ր» ասաց նա քեզ.
Ծիծաղելով, ծաղրելով.
«Տեսնեմ, ի՛նչպես դու կըճախրես
Ջարդվա՛ծ, անզո՛ր թևերով...»:
Ե՛ս էլ քեզ պես ազատ թիթեռ,
Ինձ օտար էր վիշտ, թախիծ,
Բայց մեկն անգութ, զվարճասեր,
Սիրո ցանցում բռնեց ինձ.
Բռնե՛ց... փշրե՛ց իմ սերն ու հույս
Եվ ծաղրելով ասաց ինձ.
«Գնա՛, դարձյալ ապրիր, ո՛վ կույս,
Գոհ և՛ բախտից, և՛ կյանքից...»:

Լացի՛ր ինձ հետ, խղճո՛ւկ թիթեռ.

Լացող ընկեր քեզ գրտար,
Թո՛ղ երկուսիս տանջված սրտեր
Միմյանց լինեն մխիթար...